

4.2 Զբոսաշրջություն

4.2.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2011թ. հունվար-դեկտեմբերին հանրապետություն են ժամանել 757935 զբոսաշրջիկներ¹ կամ 2010թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 10.3%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 714953 մարդ կամ 2010թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ցուցանիշը աճել է 10.2%-ով:

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2010-2011թթ. հունվար-դեկտեմբերին

մարդ

	2010թ. հունվար- դեկտեմբեր ^ժ	2011թ. հունվար- դեկտեմբեր	2011թ. . հունվար- դեկտեմբերը 2010թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ
Հյուրանոցների քանակը , որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների	50	58	116.0
Ժամանողներ			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՋՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	687229	757935	110.3
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	70209	124113	176.8
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	617020	633822	102.7
Մեկնողներ			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՋՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	648854	714953	110.2
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է			
զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից	11031	11317	102.6
ինքնուրույն	637823	703636	110.3

Ըստ հյուրանոցային տնտեսություններից ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2011թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 19.9%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 38.5%-ը՝ ԵՄ երկրներին և 41.6%՝ այլ երկրներին:

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության (ՋՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

²Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք են հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունից, իսկ 2011թ-ից՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոսը ՀՀ ԱՎԾ, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ԶԶՀ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2010-2011թթ. հունվար-դեկտեմբերին¹

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2010թ. հունվար-դեկտեմբեր	2011թ. հունվար-դեկտեմբեր	
Ընդամենը	100.0	100.0	176.8
այդ թվում՝			
ԱՊՀ երկրներ	21.0	19.9	167.1
որից՝			
Ուկրաինա	1.6	1.9	2.2 անգամ
Ռուսաստանի Դաշնություն	18.3	16.8	162.1
ԱՊՀ այլ երկրներ	1.1	1.1	179.6
ԵՄ երկրներ	31.3	38.5	2.2 անգամ
որից՝			
Նիդերլանդներ	1.0	2.0	3.6 անգամ
Իտալիա	3.9	6.2	2.8 անգամ
Ֆրանսիա	9.4	10.0	188.3
Գերմանիա	5.7	5.5	172.2
Միացյալ Թագավորություն	4.3	4.7	196.9
ԵՄ այլ երկրներ	7.1	10.0	2.5 անգամ
Այլ երկրներ	47.7	41.6	154.4
ԱՄՆ	14.4	14.8	182.9
Իրանի Իսլամական Հանրապետություն	10.4	7.4	125.7
Վրաստան	3.6	2.6	126.4
Թուրքիա	2.8	1.4	85.8
Կանադա	2.0	1.7	150.9
այլ երկրներ	14.5	13.7	167.4

Զբոսաշրջության ցուցանիշներն ըստ նպատակի

	2010 թ. հունվար-դեկտեմբեր	Տեսակարար կշիռը (2010թ. հունվար-դեկտեմբեր,%)	մարդ	
			2011 թ. հունվար-դեկտեմբեր	Տեսակարար կշիռը (2011թ. հունվար-դեկտեմբեր,%)
Ժամանողներ¹				
Ընդամենը զբոսաշրջիկներ	70209.0	100.0	124113	100.0
որոնցից ըստ նպատակի				
գործնական	31182.0	44.4	36022.0	29.0
հանգստի և ժամանցի	14999.0	21.4	27020.0	21.8
կրթության	19.0	0.0	16.0	0.0
բուժման	579.0	0.8	1187.0	1.0
այլ	23430.0	33.4	59868.0	48.2
Մեկնողներ²				
Ընդամենը զբոսաշրջիկներ	11031.0	100.0	11317.0	100.0
որոնցից ըստ նպատակի				
գործնական	528.0	4.8	983.0	8.7
հանգստի և ժամանցի	3699.0	33.5	3757.0	33.2
կրթության	6.0	0.1	5.0	0.0
բուժման	502.0	4.6	0.0	0.0
այլ	6296.0	57.1	6572.0	58.1

¹Բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում հաշվառված զբոսաշրջիկներին:

²Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: